

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ-ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՔՄԱՇՁԲ-18/1-1**

ք. Երևան

05 ապրիլի 2018թ.

ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Վ.Կարապոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 235539472 (Երկու հարյուր երեսունհինգ միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220042
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կոմիտաս 35/2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/6
Հ/Հ 247120034787
ՀՎՀՀ 00113126
Գործառնականության



Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

«Ձ դրամ

հրավերով նախատեսված չափաքանի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Աշխատանքի					կատարման	
		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/«Ձ դրամ	ընդհանուր գինը/«Ձ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	71351280/1	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ WGS-84 (ԿԻՋԻ ԷՍ-84) (ArmREF02) ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԿՈՌՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔՎԱԶԻԳԵՈՒԴԻ ՄՈՂԵԼԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	դրամ	62981400	62981400	1		մինչև 15.12.2018թ.
4	71351280/1	«Ձ ՏԱՐԱԾՔԻ ԹՎԱՅԻՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՂՆԵՐԸ ԵՏՀ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (Սպիտակ)	դրամ	53495040	53495040	1		մինչև 15.12.2018թ.
5	71351280/1	«Ձ ՏԱՐԱԾՔԻ ԹՎԱՅԻՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՂՆԵՐԸ ԵՏՀ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (Սևան)	դրամ	60407032	60407032	1		մինչև 15.12.2018թ.
7	71351280/1	ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	դրամ	9600000	9600000	1		մինչև 15.12.2018թ.
8	71351280/1	ԹԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	դրամ	12756000	12756000	1		մինչև 15.12.2018թ.
9	71351280/1	«Ձ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿԵԻՈՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	դրամ	36300000	36300000	1		մինչև 15.12.2018թ.

* աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**Չափաբաժին 1-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ArmREF02)
ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԿՈՌՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔՎԱԶԻԳԵՈՒԴԻ ՄՈԴԵԼԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

1. Քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքներ

Տարբեր տեղագրագեոդեզիական, քարտեզագրական, հետախուզական, նախագծային, շինարարական և այլ աշխատանքներ իրականացնելու համար GPS դիտարկումներից ստացված WGS-84 համաշխարհային համակարգում գեոդեզիական կոորդինատները Հելմերտի բանաձևի միջոցով վերահաշվարկվում է լոկալ տեղական հարթ ուղղանկյուն կոորդինատային համակարգում, ապահովելով բարձր ճշտություն: Սակայն GPS դիտարկումներից ստացված «գեոդեզիական» բարձրությունից անցումը «նորմալ» բարձունքային նիշերի /1977թ. Բալթյան համակարգ/ չի ապահովում բարձր ճշտություն, քանի որ դա կապված է ոչ միայն հաշվարկային բանաձևերից, այլ նաև Երկրագնդի տվյալ շրջանի գրավիտացիոն դաշտից: Երկրագնդի մարմնում զանգվածների ոչ համաչափ տեղաբաշխման հետևանքով, ծանրության ուժը փոփոխվում է նրա մակերևույթի վրա ոչ օրինաչափ ձևով:

Այդ խնդիրը լուծելու համար «նորմալ» բարձրությունները հաշվարկվում են տարածքի քվազիգեոիդի թվային մոդելից ստացված ուղղումների օգնությամբ, որոնք արտահայտում են Երկրագնդի գրավիտացիոն դաշտի բարդ բնույթագիրը: Մոդելը պետք է կառուցել ՀՀ տարածքում իրականացված GPS դիտարկումներից ստացված 400 կետերի «գեոդեզիական» և նույն կետերի I և II դասի նիվելիրացման աշխատանքներից ստացված «նորմալ» բարձունքային նիշերի համադրման, խորը վերլուծությունների, ինչպես նաև բարդ հաշվարկների միջոցով: Սակայն ՀՀ լեռնային շրջաններում, որտեղ նման տվյալները բացակայում են, մոդելը հաշվարկված է ինտերպոլացիոն և էքստրապոլացիոն եղանակներով, ինչը չի բավարարում ժամանակակից պահանջներին:

Սույն ծրագրով ՀՀ տարածքի որոշ բարձրադիր շրջաններում նախատեսվում է իրականացնել GPS դիտարկումներ, II դասի նիվելիրացման աշխատանքներ: Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կնպաստի բարձրացնելու ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակը, որն էլ կապահովի «ՌՈՎԵՐ» դիտարկման GPS ընդունիչ կայաններից անմիջապես ստանալու կետի տեղադիրքի կոորդինատները ArmWGS-84/ArmREF02/ համակարգում (այդ թվում նորմալ բարձրությունը):

2. Աշխատանքների իրականացման նպատակը

Սույն ծրագրով ՀՀ տարածքի որոշ բարձրադիր շրջաններում նախատեսվում է իրականացնել GPS դիտարկումներ, II դասի նիվելիրացման աշխատանքներ: Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումներից բարձր ճշտությամբ ստացված «գեոդեզիական» բարձրությունից անցումը «նորմալ» բարձունքային նիշերի: Դրանով հնարավորություն է ստեղծվում խնայել մարդկային ռեսուրսները, աշատանքի կատարման ժամանակը և ֆինանսական միջոցները:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

Քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքների ավարտից հետո արդեն հայտնի 400 ելակետերով կստանանք հաշվարկված ինտերպոլացիոն և էքստրապոլացիոն եղանակներով ՀՀ տարածքի քվազիգեոիդի մոդելը.

- II դասի նիվելիրացման աշխատանքներ:
- Քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումների «գեոդեզիական» բարձրություններից անցում այլ էլիպսոիդային և «նորմալ» բարձունքային նիշերի (ակնկալվում է ստանալ պլանային և բարձունքային դիրքի կոորդինատների մինչև 40 մմ ձևափոխման ճշտություն):

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

Այս աշխատանքների իրականացման արդյունքում 2018 թվականին ակնկալվում է ունենալ՝

- GPS 249 հիմնակետերի դիտարկում և կոորդինատների հավասարակշռում ու հաշվարկում.
- II դասի 180.23 գծ.կմ նիվելիրացում.
- II դասի 180.23 գծ.կմ նիվելիրացման նյութերի մշակում և 7 կետերի հավասարակշռում: Քվազիգեոիդի մոդելի ստեղծման համար 1297 կետերի տվյալների հավաքագրում, բազայի ստեղծում, հաշվարկների կատարում, վերլուծություն, տրանսֆորմացիոն պարամետրերի որոշում.
- կունենանք ՀՀ տարածքի քվազիգեոիդի արդիական մոդելը.

- տեխնիկական հաշվետվություն:

5. Ծրագրի իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույցը

Ծրագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության տարածքում WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ArmREF02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվադրանտի մոդելի ստեղծման նախատեսվող աշխատանքներն ու ծախսերի նախահաշիվը տրված է աղյուսակում:

Ժամանակացույց

2018 քվադրանտի մոդելի ստեղծման բնագավառում նախատեսվող աշխատանքների

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Զափման միավորը	աղյուսակ		
			1 կիսամյակ ծավալը	9 ամիս ծավալը	Տարի ծավալը
1	GPS կետերի դիտարկում	կետ	149	249	249
2	GPS կետերի կոորդինատների մշակում, հավասարակշռում և հաշվարկում	կետ	149	249	249
3	II դասի նիվելիրացում	զծ. կմ	100	180.23	180.23
4	II դասի նիվելիրացման նյութերի մշակում	զծ. կմ			180.23
5	II դասի նիվելիրացման նյութերի հավասարակշռում	10 կետ			7
6	Քվադրանտի ստեղծման համար տվյալների հավաքագրում, բազայի ստեղծում, հաշվարկների կատարում, վերլուծություն, տրանսֆորմացիոն պարամետրերի որոշում	կետ	300	500	1297
7	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետվ			1

Զափաթեթին 4- ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԹՎԱՅԻՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԸ ԵՏՀ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՏԵՂԾԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (Սպիտակ)

1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

Տեղագրական քարտեզագրության բնագավառում պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների ստեղծման և թարմացման նպատակով աշխատանքներն իրականացվելու են ՀՀ կառավարության 19.09.2002 թվականի «ՀՀ պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման ծրագիրը հաստատելու մասին» N1565-Ն որոշման և ՀՀ կառավարության համապատասխան որոշումների շրջանակներում:

ՀՀ պետական մասշտաբային շարքի քարտեզների տեղափոխումն ԵՏՀ միջավայր, հիմք են հանդիսանում գերատեսչական տարբեր ոլորտների /քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն/ խնդիրների լուծման նպատակով ստեղծվելիք քարտեզագրական նյութերի համար:

Տիեզերանկարահանման աշխատանքների իրականացման նպատակով 2008 թվականին ռուսական կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում ձեռք էր բերվել երկրի հեռահար զոնդավորման տվյալների ընդունիչ կայանը՝ համապատասխան սարքավորումներով և ծրագրային ապահովմամբ: Տիեզերական ընդունիչ կայանի միջոցով ստացված նյութերի հիման վրա 2009-2010 թվականներին կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվել են ՀՀ պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքները:

Նորվեգական դրամաշնորհով 2014 թվականին նախատեսվել և իրականացվել է ՀՀ տարածքի օդալուսանկարահանում 10 բրտ թույլատրելիությամբ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների համար և

մնացած քաղաքների ու բնակավայրերի հարակից տարածքների համար՝ 20 քրմ թույլատրելիությամբ 1:2000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերի ստեղծման նպատակով:

2013 թվականից մասշտաբային շարքի բոլոր տեղագրական քարտեզները տեղափոխվում են ArcGIS միջավայր, իսկ 2015 թվականից ՀՀ քաղաքների տեղագրական հատակագծերն արդեն իսկ ստեղծվում են ԵՏՀ միջավայրում:

Աշխատանքների հիմնական նպատակը հանդիսանում է «ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 791-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 763-Ն որոշման համաձայն WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ընդունումը հանրապետությունում բազային հանդիսացող 1:10000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերի, տեղագրական քարտեզների, ինչպես նաև այն խոշոր քաղաքների համար, որոնք ունեն 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծեր:

Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի իրականացման ծրագիրը մշակվել է «Հայաստանի Հանրապետության գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N197-Ն որոշմամբ հաստատված երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգի պահանջներից ելնելով:

Այս ուղղությամբ 2005-2012 թվականներին Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում իրականացվել են բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն աշխարհագրական անվանումների, հողային ֆոնդի, անշարժ գույքի նպատակային, գործառնական նշանակության, հողատեսքերի, ջրագրության, ռելիեֆի, գծային ենթակառուցվածքների օբյեկտների մասին քարտեզագրական և տեքստային տվյալների տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն էր: Ֆինանսավորման առկայության դեպքում այս նյութերը ենթակա են թարմացման: 2016-2017 թվականներին ավարտվել են Գյումրի և Վանաձոր քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները:

Պետական մակարդակով երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը և ներդրումը թույլ կտա բացառել ոչ բավարար հիմնավորում ունեցող որոշումների ընդունումը և անցնել պետական կառավարման որակապես նոր մակարդակի:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում ժամանակակից երկրատեղեկատվական համակարգի օգտագործումը կնպաստի՝

- Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների տնտեսական ծրագրերի արդյունավետ մշակմանը,
- կառավարման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և մշակման ստանդարտացման աստիճանի բարձրացմանը,
- տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործվող տարածական տեղեկատվության անհարկի կրկնօրինակման և տվյալների հակասականության բացառմանը,
- տարածական տվյալների ստեղծման գործընթացի հեշտացմանը, օպերատիվության բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը,
- տարածական տվյալների մատչելիության ապահովմանը,
- հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովմանը,
- տվյալների ամբողջականության, հավաստիության, ճշտության ստուգման ներքին մեխանիզմների մշակմանը,
- տարածական տվյալների արդիականության և անընդհատության ապահովմանը:

Երկրատեղեկատվական համակարգի (ԵՏՀ) ստեղծումը աշխարհագրական բոլոր տեսակի կապակցված տեղեկատվության ներդրումն է, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր օբյեկտակողմնորոշիչ հանգամաքում տալ օպերատիվ լուծումներ և դրանով ստանալ անհրաժեշտ քարտեզագրական և թեմատիկ տեղեկատվություն:

ԵՏՀ տվյալների թեմատիկ բանկի առկայությունը պայմանավորված է քաղաքացիների, կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հավաստի, օպերատիվ ու արդիական տարածական տվյալների սպառման պահանջներով:

1. Աշխատանքների իրականացման նպատակը

ՀՀ մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների ստեղծելուց և թարմացնելուց հետո, բնագավառի կարևորագույն նպատակն է ստեղծել ՀՀ բնակավայրերի/քաղաքների 1:2000 մաստաբի տեղագրական հատակագծերը ԵՏՀ միջավայրում:

2014 թվականի հունվարի 16-ի թիվ 86-Ն ՀՀ կառավարության որոշման պահանջներին համապատասխան, ՀՀ մասշտաբային շարքի տեղագրական քարտեզները արդիականացնելու նպատակով՝ իրականացվել են նոր առաջացած տարածական տվյալների և տեղագրական տարրեր պարունակող օբյեկտների տեղադրումը տեղագրական քարտեզների վրա: Այս աշխատանքները կրում են շարունակական

ընույթ: Միաժամանակ անհրաժեշտ է ՀՀ ամբողջ տարածքի արդեն իսկ ստեղծված թվային քարտեզները տեղափոխել ArcGis ծրագրային փաթեթ:

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային ԵՏՀ-ի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և դրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների վերաբերյալ, այդ թվում հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի, էկոլոգիական վիճակի մասին:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

2018 թվականին նախատեսվում է իրականացնել աերոնկարների հիման վրա նախորդ տարում **Սպիտակ քաղաքի 1634,5** հա քաղաքի կառուցապատ տարածքների 1:2000 մ-բի տեղագրական հատակագծերը կտեղափոխվեն ԵՏՀ միջավայր:

ՀՀ քաղաքների տեղագրական հատակագծերի ԵՏՀ միջավայրում ստեղծման նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

1. օրթոֆոտոհատակագծերի գրասենյակային և դաշտային մշակում,
2. տեղագրական հատակագծերի թվայնացում,
3. ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ,
4. բազային ԵՏՀ համար անհրաժեշտ շերտերի ստեղծում,
5. տեքստային տվյալների մուտքագրում տվյալների բազա:

Աշխատանքների իրականացման համար կօգտագործվեն և կիրականացվեն.

1. Նորվեգական դրամաշնորհով 2014 թվականին իրականացված 10բրո թույլատրելիությամբ

օդալուսանկարահանված նյութերից կազմված 1:2000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերը:

2. 2016 և 2017 թվականին ստեղծված **Սպիտակ քաղաքի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերը:** Բազային ԵՏՀ-ի քարտեզագրական հիմքը անհրաժեշտ է ստեղծել WGS-84 (ArmREF-02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում:

3. ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ:

Ստորգետնյա հաղորդակցուղիների հանույթը պետք է կատարվի գոյություն ունեցող կամ նոր ստեղծված պլանաբարձունքային հանութային ցանցի հիման վրա:

Տեղագրական հատակագծերի վրա անհրաժեշտ է պատկերել ստորգետնյա հաղորդակցուղիների պլանային և բարձունքային ճիշտ դիրքը՝ դասակարգված երեք հիմնական խմբերով.

- խողովակաշարեր՝ ջրմուղային ցանցեր, կոյուղիներ (տարբեր համակարգերի), ջեռուցման, գազամատակարարման, դրենաժային և հատուկ նշանակության ցանցեր,
- մալուխային /կաբելային/ ցանցեր՝ ուժային հոսանքի բարձր լարման ցանցեր,
- թունելներ (ընդհանուր հավաքիչներ /կոլեկտորներ/), որոնք ծառայում են միայն մալուխների /կաբելների/ տեղաբաշխման համար:

Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հետախուզման և հանութագրման ժամանակ պետք է նշվեն հաղորդակցուղիների տեսակը /ջրատար, գազատար, կապ, հոսանք/, նշանակությունը /խմելու, կոյուղի/, բնութագրերը՝ նյութը և տրամագիծը, անցուղիների նյութը և տեսակը, մալուխների տիպը, հզորությունը:

Ստորգետնյա մայրուղային կառույցների նիվելիրացումն իր մեջ ընդգրկում է ողնակների (հորերի ելակետերի թուջի օղակների միջնամասի) բարձրությունների որոշումն, ինչպես նաև հորերում տեղադրված խողովակների, մալուխների, անցուղիների բարձրությունների որոշումը հողի կամ հորի սալարկման մակերևույթի համեմատ:

Ստորգետնյա կառույցների հատակագծերը և ցանցերի տեխնիկական բնութագրերը պետք է համաձայնեցվեն շահագործող կազմակերպությունների հետ:

4. Բազային ԵՏՀ-ի համար անհրաժեշտ շերտերի և տեքստային տվյալների ստեղծում և մուտքագրում տվյալների բազա: Մասնավորապես ՀՀ ԵՏՀ-ի ներդրման նպատակով կատարվող աշխատանքների առանձին տեսակների բաշխման մասին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 06.03.2008թ. N08-63 Լ հրամանի համաձայն պետք է ապահովվել քարտեզագրական հիմքի հետևյալ շերտերն ու տարրերը՝

- շենքերը, շինությունները, դրանց հարկայնությունը, նյութի տեսակը,
- բնակավայրերի աշխարհագրական անվանումները,
- բնակավայրի ջրագրության շերտը, այդ թվում՝ լճեր, ջրամբարներ, գետեր, գետակներ, ջրանցքներ,
- բնակավայրի ռելիեֆը, այդ թվում՝ լեռներ, բլուրներ, կիրճեր, ձորեր,
- բնակավայրի գծային ենթակառուցվածքները, այդ թվում՝ երկաթգծեր և ավտոմոբիլային ճանապարհներ (միջպետական, պետական, տեղական նշանակության), գազատարներ, ջրատարներ, (վերգետնյա, ստորգետնյա), մայրուղային հեռահաղորդակցության կապուղիներ (վերգետնյա, ստորգետնյա), բարձր լարման էլեկտրահաղորդագծեր (վերգետնյա, ստորգետնյա), կոմունալ ենթակառուցվածքներ (վերգետնյա, ստորգետնյա):

Վերը նշված քարտեզագրական շերտերը դասակարգելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել հետևյալ հիմնական խմբերը՝

- 1.մաթեմատիկական հիմք,
- 2.գեոդեզիական հիմքի կետեր,
- 3.շենքեր, շինություններ,
- 4.երկաթգծեր,
- 5.երկաթգծերին կից կառույցներ,
- 6.ճանապարհային ցանց,
- 7.ճանապարհային կառույցներ,
- 8.ջրագրություն,
- 9.հիդրոտեխնիկական կառույցներ,
- 10.ջրագծեր և կոյուղի (վերգետնյա և ստորգետնյա),
- 11.գազատար (վերգետնյա և ստորգետնյա),
- 12.հեռահաղորդակցության կապուղիներ (վերգետնյա և ստորգետնյա),
- 13.էլեկտրագծեր (վերգետնյա և ստորգետնյա),
- 14.ռելիեֆ (հորիզոնական հաստեցված և հիմնական),
- 15.ռելիեֆի տարրեր (լեռներ, ձորեր, կիրճեր),
- 16.գրագրություն:

Այս խմբերում պետք է դասակարգել և ստեղծել հետևյալ ենթաշերտերը ըստ ձևերի՝ մակերևույթային, գծային, կետային:

Տվյալների բազա:

Համայնքի բազային ԵՏՀ-ի տեղեկատվական բանկը պետք է ստեղծվի թվային տեղագրական քարտեզի հիման վրա, որը պետք է պարունակի հետևյալ տեքստային տվյալները, այդ թվում՝

- 1.շենք շինության հարկայնությունը և նյութի տեսակը,
- 2.աշխարհագրական անվանումները,
- 3.ջրագրական և հիդրոտեխնիկական կառույցները,
- 4.ռելիեֆը,
- 5.Համայնքում առկա գծային ենթակառուցվածքները, այդ թվում.
 - երկաթգծեր և ավտոմոբիլային ճանապարհներ (միջպետական, պետական, տեղական նշանակության),
 - երկաթգծերին և ճանապարհներին կից կառույցներ,
 - գազատարներ, ջրատարներ, (վերգետնյա, ստորգետնյա),

- մայրուղային հեռահաղորդակցության կապուղիներ (վերգետնյա, ստորգետնյա),
- բարձր լարման էլեկտրահաղորդագծեր (վերգետնյա, ստորգետնյա),
- կոմունալ ենթակառուցվածքներ (վերգետնյա, ստորգետնյա):

Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների տեղադիրքի որոշման համար անհրաժեշտ է օգտագործել IT-5 կամ դրան համարժեք տեղորոշիչ սարքավորումներ: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիները համաձայնեցնել շահագործող կազմակերպությունների հետ:

Գրասենյակային աշխատանքների կատարման ժամանակ օգտագործել ֆոտոգրամետրական կայան 7 Erdas Imagine ծրագրային փաթեթը: Հատակագծերը պետք է ստեղծված լինեն ArcGIS ծրագրագրային փաթեթով, 1:2000 մասշտաբին համապատասխանող պայմանական նշաններով: Գծային և մակերեսային օբյեկտները պետք է ունենան իրենց բնութագրերը, որնք լրացվում են Երկրատեղեկատվական բազայում: Ավտոմատ եղանակով ստացված տեղանքի մոդելը պետք է ճշգրտվեն և բնորոշ կետերի համար ստացվեն բարձունքային նիշեր:

Դաշտային և գրասենյակային աշխատանքներն իրականացնող մասնագետները պետք է ունենան նմանատիպ աշխատանքների իրականացման ոչ պակաս քան հինգ տարվա աշխատանքային փորձ:

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

Այս աշխատանքների իրականացման արդյունքում 2018 թվականին նախատեսվում է ունենալ՝

- 1 տեխնիկական նախագիծ,
- Սպիտակ քաղաքի 1634,5 հա 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծեր ԵՏՀ միջավայրում,
- ՀՀ մասշտաբային շարքի նախկինում ստեղծված 200 թերթ էլեկտրոնային տեղագրական քարտեզների տեղափոխում ԵՏՀ միջավայր ArcGis ծրագրային փաթեթում,
- 100 նոր ստեղծված տեղագրական օբյեկտի տեղադրում տեղագրական քարտեզների վրա,
- 1 տեխնիկական հաշվետվություն:

5. Աշխատանքների իրականացման ժամանակացույցն ըստ եռամսյակների

2018 թվականին նախատեսվող ՀՀ տեղագրական քարտեզների և հատակագծերի ԵՏՀ միջավայրում ստեղծելու 2018 թվականին նախատեսվող աշխատանքների ծախսերի նախահաշիվն ըստ ծավալների տրված է աղյուսակում:

Ժամանակացույց

2018 թվականին տեղագրական քարտեզագրության բնագավառում առաջարկվող աշխատանքների աղյուսակ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	աղյուսակ		
			1 կիսամյակ ծավալը	9 ամիս ծավալը	Տարի ծավալը
1	Տեխնիկական նախագծի կազմում - բնակավայր՝ Սպիտակ	նախ.	1	1	1
2	Մասշտաբային շարքի քարտեզների թարմացման դաշտային աշխատանքներ այլ տեղեկությունների հիման վրա	օբյեկտ	50	100	100
3	Մասշտաբային շարքի քարտեզների թարմացման գրասենյակային աշխատանքներ	օբյեկտ	0	50	100
4	1:10000 և 1:25000 մասշտաբների տեղագրական քարտեզների տեղափոխում ԵՏՀ միջավայր ArcGis ծրագրային փաթեթում	թերթ	100	180	200
5	Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների տեղագնում հանութագրում, ելքերի և դիտահորերի տարրերի չափագրում՝ Սպիտակ-1634.5հա	հա	1534.5	1634.5	1634,5
6	Ստորգետնյա հաղորդակցուղիների նիշերի որոշում, հատակագծերի կազմում կառուցապատված տարածքներում և համաձայնեցում	հա	1534.5	1634.5	1634,5

7	Անհրաժեշտ շերտերի ստեղծում, դասակարգում և միաբերում՝ Սպիտակ-1634.5հա	հա x շերտ	17979.5	17979.5	17979.5
8	Քաղաքային երկրատեղեկատվական համակարգի համար տվյալների հավաքագրում և ներմուծում տվյալների քաղա՝ Սպիտակ-1634.5հա	տարր	114415.0	114415.0	114415.0
9	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետ	0	0	1

Չափաբաժին 5- ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԹՎԱՅԻՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԸ ԵՏՀ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (Սևան)

1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

Տեղագրական քարտեզագրության բնագավառում պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների ստեղծման և թարմացման նպատակով աշխատանքներն իրականացվելու են ՀՀ կառավարության 19.09.2002 թվականի «ՀՀ պետական մասշտաբային շարքի քաղաքային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման ծրագիրը հաստատելու մասին» N1565-Ն որոշման և ՀՀ կառավարության համապատասխան որոշումների շրջանակներում:

ՀՀ պետական մասշտաբային շարքի քարտեզների տեղափոխումն ԵՏՀ միջավայր, հիմք են հանդիսանում գերատեսչական տարբեր ոլորտների /քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն/ խնդիրների լուծման նպատակով ստեղծվելիք քարտեզագրական նյութերի համար:

Տիեզերանկարահանման աշխատանքների իրականացման նպատակով 2008 թվականին ռուսական կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում ձեռք էր բերվել երկրի հեռահար զոնդավորման տվյալների ընդունիչ կայանը՝ համապատասխան սարքավորումներով և ծրագրային ապահովմամբ: Տիեզերական ընդունիչ կայանի միջոցով ստացված նյութերի հիման վրա 2009-2010 թվականներին կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվել են ՀՀ պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքները:

Նորվեգական դրամաշնորհով 2014 թվականին նախատեսվել և իրականացվել է ՀՀ տարածքի օդալուսանկարահանում 10 քրո թույլատրելիությամբ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների համար և մնացած քաղաքների ու բնակավայրերի հարակից տարածքների համար՝ 20 քրո թույլատրելիությամբ 1:2000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերի ստեղծման նպատակով:

2013 թվականից մասշտաբային շարքի բոլոր տեղագրական քարտեզները տեղափոխվում են ArcGIS միջավայր, իսկ 2015 թվականից ՀՀ քաղաքների տեղագրական հատակագծերն արդեն իսկ ստեղծվում են ԵՏՀ միջավայրում:

Աշխատանքների հիմնական նպատակը հանդիսանում է «ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 791-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 763-Ն որոշման համաձայն WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ընդունումը հանրապետությունում քաղաքային հանդիսացող 1:10000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերի, տեղագրական քարտեզների, ինչպես նաև այն խոշոր քաղաքների համար, որոնք ունեն 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծեր:

Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի իրականացման ծրագիրը մշակվել է «Հայաստանի Հանրապետության գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N197-Ն որոշմամբ հաստատված երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգի պահանջներից ելնելով:

Այս ուղղությամբ 2005-2012 թվականներին Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում իրականացվել են քաղաքային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն աշխարհագրական անվանումների, հողային ֆոնդի, անշարժ գույքի նպատակային, գործառնական նշանակության, հողատեսքերի, ջրագրության, ռելիեֆի, գծային ենթակառուցվածքների օբյեկտների մասին քարտեզագրական և տեքստային տվյալների տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն էր: Ֆինանսավորման առկայության դեպքում այս նյութերը ենթակա են թարմացման: 2016-2017 թվականներին ավարտվել են Գյումրի և Վանաձոր քաղաքների քաղաքային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները:

Պետական մակարդակով երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը և ներդրումը թույլ կտա բացառել ոչ բավարար հիմնավորում ունեցող որոշումների ընդունումը և անցնել պետական կառավարման որակապես նոր մակարդակի:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում ժամանակակից երկրատեղեկատվական համակարգի օգտագործումը կնպաստի՝

- Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների տնտեսական ծրագրերի արդյունավետ մշակմանը,
- կառավարման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և մշակման ստանդարտացման աստիճանի բարձրացմանը,
- տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործվող տարածական տեղեկատվության անհարկի կրկնօրինակման և տվյալների հակասականության բացառմանը,
- տարածական տվյալների ստեղծման գործընթացի հեշտացմանը, օպերատիվության բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը,
- տարածական տվյալների մատչելիության ապահովմանը,
- հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովմանը,
- տվյալների ամբողջականության, հավաստիության, ճշտության ստուգման ներքին մեխանիզմների մշակմանը,
- տարածական տվյալների արդիականության և անընդհատության ապահովմանը:

Երկրատեղեկատվական համակարգի (ԵՏՀ) ստեղծումը աշխարհագրական բոլոր տեսակի կապակցված տեղեկատվության ներդրումն է, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր օբյեկտակոլմնորոշիչ հանգամաքում տալ օպերատիվ լուծումներ և դրանով ստանալ անհրաժեշտ քարտեզագրական և թեմատիկ տեղեկատվություն:

ԵՏՀ տվյալների թեմատիկ բանկի առկայությունը պայմանավորված է քաղաքացիների, կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հավաստի, օպերատիվ ու արդիական տարածական տվյալների սպառման պահանջներով:

2. Աշխատանքների իրականացման նպատակը

ՀՀ մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների ստեղծելուց և թարմացնելուց հետո, բնագավառի կարևորագույն նպատակն է ստեղծել ՀՀ բնակավայրերի/քաղաքների 1:2000 մաստաբի տեղագրական հատակագծերը ԵՏՀ միջավայրում:

2014 թվականի հունվարի 16-ի թիվ 86-Ն ՀՀ կառավարության որոշման պահանջներին համապատասխան, ՀՀ մասշտաբային շարքի տեղագրական քարտեզները արդիականացնելու նպատակով՝ իրականացվել են նոր առաջացած տարածական տվյալների և տեղագրական տարրեր պարունակող օբյեկտների տեղադրումը տեղագրական քարտեզների վրա: Այս աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Միաժամանակ անհրաժեշտ է ՀՀ ամբողջ տարածքի արդեն իսկ ստեղծված թվային քարտեզները տեղափոխել ArcGis ծրագրային փաթեթ:

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային ԵՏՀ-ի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և դրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների վերաբերյալ, այդ թվում հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի, էկոլոգիական վիճակի մասին:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

2018 թվականին նախատեսվում է իրականացնել աերոնկարների հիման վրա **Սևան** քաղաքի վերջին հատվածի՝ 615,8 կառուցապատ տարածքների 1:2000 մ-բի հատակագծերի ստեղծումը: Այնուհետև այդ նախորդ տարում ստեղծված **Սևան** քաղաքի 1160,2 հա տեղագրական հատակագծերը կտեղափոխվեն ԵՏՀ միջավայր:

2018 թվականի ընթացքում ՀՀ մասշտաբային շարքի նախկինում ստեղծված քարտեզներից ևս 200-ը Microstation ծրագրային փաթեթից պետք է տեղափոխել ArcGis ծրագրային փաթեթ: Միաժամանակ տեղագրական քարտեզները կթարմացվեն 100 նոր ստեղծված տեղագրական օբյեկտներով:

ՀՀ քաղաքի տեղագրական հատակագծերի ԵՏՀ միջավայրում ստեղծման նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

1. օրթոֆոտոհատակագծերի գրասենյակային և դաշտային մշակում,
2. տեղագրական հատակագծերի թվայնացում,
3. ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ,
4. բազային ԵՏՀ համար անհրաժեշտ շերտերի ստեղծում,
5. տեքստային տվյալների մուտքագրում տվյալների բազա:

Աշխատանքների իրականացման համար կօգտագործվեն և կիրականացվեն.

1. Նորվեգական դրամաշնորհով 2014 թվականին իրականացված 10թթթ թույլատրելիությամբ

օդալուսանկարահանված նյութերից կազմված 1:2000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերը:

2. 2017 թվականին ստեղծված **Սևան 1160.2** հա քաղաքի 1:2000 մասշտաբի թարմացված

տեղագրական հատակագծերը: Բազային ԵՏՀ-ի քարտեզագրական հիմքը անհրաժեշտ է ստեղծել WGS-84 (ArmREF-02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում:

3. ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ:

Ստորգետնյա հաղորդակցուղիների հանույթը պետք է կատարվի գոյություն ունեցող կամ նոր ստեղծված պլանաբարձունքային հանութային ցանցի հիման վրա:

Տեղագրական հատակագծերի վրա անհրաժեշտ է պատկերել ստորգետնյա հաղորդակցուղիների պլանային և բարձունքային ճիշտ դիրքը՝ դասակարգված երեք հիմնական խմբերով.

- խողովակաշարեր՝ ջրմուղային ցանցեր, կոյուղիներ (տարբեր համակարգերի), ջեռուցման, գազամատակարարման, դրենաժային և հատուկ նշանակության ցանցեր,
- մալուխային /կաբելային/ ցանցեր՝ ուժային հոսանքի բարձր լարման ցանցեր,
- թունելներ (ընդհանուր հավաքիչներ /կոլեկտորներ/), որոնք ծառայում են միայն մալուխների /կաբելների/ տեղաբաշխման համար:

Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հետախուզման և հանութագրման ժամանակ պետք է նշվեն հաղորդակցուղիների տեսակը /ջրատար, գազատար, կապ, հոսանք/, նշանակությունը /խմելու, կոյուղի/, բնութագրերը՝ նյութը և տրամագիծը, անցուղիների նյութը և տեսակը, մալուխների տիպը, հզորությունը:

Ստորգետնյա մայրուղային կառույցների նիվելիրացումն իր մեջ ընդգրկում է ողնակների (հորերի ելակետերի թուփ օղակների միջնամասի) բարձրությունների որոշումն, ինչպես նաև հորերում տեղադրված խողովակների, մալուխների, անցուղիների բարձրությունների որոշումը հողի կամ հորի սալարկման մակերևույթի համեմատ:

Ստորգետնյա կառույցների հատակագծերը և ցանցերի տեխնիկական բնութագրերը պետք է համաձայնեցվեն շահագործող կազմակերպությունների հետ:

4. Բազային ԵՏՀ-ի համար անհրաժեշտ շերտերի և տեքստային տվյալների ստեղծում և մուտքագրում տվյալների բազա: Մասնավորապես ՀՀ ԵՏՀ-ի ներդրման նպատակով կատարվող աշխատանքների առանձին տեսակների բաշխման մասին ՀՀ կառավարությանն աղընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 06.03.2008թ. N08-63 Լ հրամանի համաձայն պետք է ապահովել քարտեզագրական հիմքի հետևյալ շերտերն ու տարրերը՝

- շենքերը, շինությունները, դրանց հարկայնությունը, նյութի տեսակը,
- բնակավայրերի աշխարհագրական անվանումները,
- բնակավայրի ջրագրության շերտը, այդ թվում՝ լճեր, ջրամբարներ, գետեր, գետակներ, ջրանցքներ,
- բնակավայրի ռելիեֆը, այդ թվում՝ լեռներ, բլուրներ, կիրճեր, ձորեր,
- բնակավայրի գծային ենթակառուցվածքները, այդ թվում՝

երկաթգծեր և ավտոմոբիլային ճանապարհներ (միջպետական, պետական, տեղական նշանակության), գազատարներ, ջրատարներ, (վերգետնյա, ստորգետնյա), մայրուղային հեռահաղորդակցության կապուղիներ (վերգետնյա, ստորգետնյա), բարձր լարման էլեկտրահաղորդագծեր (վերգետնյա, ստորգետնյա), կոմունալ ենթակառուցվածքներ (վերգետնյա, ստորգետնյա):

Վերը նշված քարտեզագրական շերտերը դասակարգելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել հետևյալ հիմնական խմբերը՝

1. մաթեմատիկական հիմք,
2. գեոդեզիական հիմքի կետեր,

3. շենքեր, շինություններ,
4. երկաթգծեր,
5. երկաթգծերին կից կառույցներ,
6. ճանապարհային ցանց,
7. ճանապարհային կառույցներ,
8. ջրագրություն,
9. հիդրոտեխնիկական կառույցներ,
10. ջրագծեր և կոյուղի (վերգետնյա և ստորգետնյա),
11. գազատար (վերգետնյա և ստորգետնյա),
12. հեռահաղորդակցության կապուղիներ (վերգետնյա և ստորգետնյա),
13. էլեկտրագծեր (վերգետնյա և ստորգետնյա),
14. ռելիեֆ (հորիզոնական հաստեցված և հիմնական),
15. ռելիեֆի տարրեր (լեռներ, ձորեր, կիրճեր),
16. գրագրություն:

Այս խմբերում պետք է դասակարգել և ստեղծել հետևյալ ենթաշերտերը ըստ ձևերի՝ մակերևույթային, գծային, կետային:

Տվյալների բազա:

Համայնքի բազային ԵՏՀ-ի տեղեկատվական բանկը պետք է ստեղծվի թվային տեղագրական քարտեզի հիման վրա, որը պետք է պարունակի հետևյալ տեքստային տվյալները, այդ թվում՝

1. շենք շինության հարկայնությունը և նյութի տեսակը,
2. աշխարհագրական անվանումները,
3. ջրագրական և հիդրոտեխնիկական կառույցները,
4. ռելիեֆը,
5. Համայնքում առկա գծային ենթակառուցվածքները, այդ թվում.
 - երկաթգծեր և ավտոմոբիլային ճանապարհներ (միջպետական, պետական, տեղական նշանակության),
 - երկաթգծերին և ճանապարհներին կից կառույցներ,
 - գազատարներ, ջրատարներ, (վերգետնյա, ստորգետնյա),
 - մայրուղային հեռահաղորդակցության կապուղիներ (վերգետնյա, ստորգետնյա),
 - բարձր լարման էլեկտրահաղորդագծեր (վերգետնյա, ստորգետնյա),
 - կոմունալ ենթակառուցվածքներ (վերգետնյա, ստորգետնյա):

Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների տեղադիրքի որոշման համար անհրաժեշտ է օգտագործել NT-5 կամ դրան համարժեք տեղորոշիչ սարքավորումներ: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիները համաձայնեցնել շահագործող կազմակերպությունների հետ:

Գրասենյակային աշխատանքների կատարման ժամանակ օգտագործել ֆոտոգրամետրական կայան 7 Erdas Imagine ծրագրային փաթեթը: Հատակագծերը պետք է ստեղծված լինեն ArcGIS ծրագրագրային փաթեթով, 1:2000 մասշտաբին համապատասխանող պայմանական նշաններով: Գծային և մակերեսային օբյեկտները պետք է ունենան իրենց բնութագրերը, որնք լրացվում են երկրատեղեկատվական բազայում: Ավտոմատ եղանակով ստացված տեղանքի մոդելը պետք է ճշգրտվեն և քննորոշ կետերի համար ստացվեն բարձունքային նիշեր:

Դաշտային և գրասենյակային աշխատանքներն իրականացնող մասնագետները պետք է ունենան նմանատիպ աշխատանքների իրականացման ոչ պակաս քան հինգ տարվա աշխատանքային փորձ:

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

Այս աշխատանքների իրականացման արդյունքում 2018 թվականին նախատեսվում է ունենալ՝

- 1 տեխնիկական նախագիծ,
- Սևան քաղաքի 1776 հա 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծեր ԵՏՀ միջավայրում,
- 1 տեխնիկական հաշվետվություն:

5. Աշխատանքների իրականացման ժամանակացույցն ըստ եռամսյակների

2018 թվականին նախատեսվող ՀՀ տեղագրական քարտեզների և հատակագծերի ԵՏՀ միջավայրում ստեղծելու 2018 թվականին նախատեսվող աշխատանքների ծախսերի նախահաշիվն ըստ ծավալների տրված է արդյուսակում:

Ժամանակացույց
2018 թվականին տեղագրական քարտեզագրության բնագավառում առաջարկվող աշխատանքների աղյուսակ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	1	9 ամիս	Տարի
			կիսամյակ ծավալը	ծավալը	ծավալը
1	Տեխնիկական նախագծի կազմում - 1 բնակավայր՝ Սևան	նախ.	1	1	1
2	1:2000 մ-բի օրթոֆոտոհատակագծերի գրասենյակային վերծանում կառուցապատ տարածքներում՝ Սևան-615.8 հա	հա	615.8	615.8	615.8
3	1:2000 մ-բի օրթոֆոտոհատակագծերի դաշտային վերծանում կառուցապատ տարածքներում	հա	615.8	615.8	615.8
4	1:2000 մ-բի տեղագրական հատակագծերի ստեղծում	հա	615.8	615.8	615.8
5	Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների տեղազննում հանութագրում, ելքերի և դիտահորերի տարրերի չափագրում Սևան-1776հա.	հա	1350	1776	1776
6	Ստորգետնյա հաղորդակցուղիների նիշերի որոշում, հատակագծերի կազմում կառուցապատված տարածքներում և համաձայնեցում	հա	1350	1776	1776
7	Անհրաժեշտ շերտերի ստեղծում, դասակարգում և միաբերում՝ Սևան-1160.2հա	հա x շերտ	12762.2	12762.2	12762.2
8	Անհրաժեշտ շերտերի ստեղծում, դասակարգում և միաբերում՝ Սևան-615.8հա	հա x շերտ	0	6816	9852.8
9	Բազային երկրատեղեկատվական համակարգի համար տվյալների հավաքագրում և ներմուծում տվյալների բազա՝ Սևան-1160.2հա	տարր	81214.0	81214.0	81214.0
10	Բազային երկրատեղեկատվական համակարգի համար տվյալների հավաքագրում և ներմուծում տվյալների բազա՝ Սևան-615.8հա	տարր	0	42600	61580,0
11	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետ	0	0	1

Չափաբաժին 7- ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակն է հանդիսանում «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ոլորտի զարգացման և արդյունավետության բարձրացման համար Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտեզարանի վարումը, ՀՀ սահմաններից դուրս գտնվող աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի ստեղծումը և տարբեր տեղեկատուների ու բառարանների հրատարակումը: Այս բնագավառում ՀՀ կառավարության 09.06.2001 թվականի N502 որոշմամբ հաստատված «ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման ու գրանցման, պետական քարտեզարանի ստեղծման և վարման» կարգի պահանջներին համապատասխան 2002-2007 թվականներին ավարտվել են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի աշխարհագրական

անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքները, միաժամանակ ստեղծվել է աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը, որը պարբերաբար թարմացվում է: 2002-2017 թվականների ընթացքում կատարվել են ՀՀ տարածքի ավելի քան 41000 աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման աշխատանքներ: ՀՀ կառավարության կողմից ստեղծված ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքի արդյունքում ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների անվանումները: Աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման արդյունքում 2009-2017 թվականներին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է համապատասխանաբար մոտ 4000 նոր աշխարհագրական օբյեկտների անվանումներ: Գրանցվել է ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների ավելի քան 41 հազար անվանում: Անվանափոխվել են ՀՀ 59 բնակավայրեր, նախատեսվում է անվանափոխել ևս 21 բնակավայր: Այս բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում հրատարակվել են ՀՀ մարզերի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուները՝ գազետիրները, որոնցում զետեղված են ՀՀ մարզերի տարածքներում գտնող աշխարհագրական օբյեկտների անվանումները: Հրատարակվել է նաև «ՀՀ բնակավայրերի բառարան»-ը, «ՀՀ ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան»-ը, «Աշխարհագրական անվանումների հայերեն լեզվով էկզոնիմների ցանկ»-ը, «ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատուն», «Աշխարհի պետությունների համառոտ տեղեկատու բառարանը», «Աշխարհի խոշորագույն քաղաքների համառոտ տեղեկատու-բառարանը», «ՀՀ պատմաճարտարապետական հուշարձանների համառոտ տեղեկատուն» և «ՀՀ լեռնագրական օբյեկտների համառոտ տեղեկատուն» «Եվրոպայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան»-ը, «ՀՀ ջրագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան»-ը: Այս բոլոր տեղեկատուները բաժանվել են ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ պետական կազմակերպություններին:

2018 թվականին շարունակվելու են ՀՀ աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման և վարման աշխատանքները, ինչպես նաև տարաբնույթ տեղեկատուների նախապատրաստման և հրատարակման աշխատանքները:

2. Աշխատանքների իրականացման նպատակը

Սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքներ, որը կրում է շարունակական բնույթ և բխում է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներից: Վարման աշխատանքների ժամանակ շարունակվելու է 2007 թվականի հունիսի 15-ին կայացած ԱԴՀ մասնակից երկրների միջպետական խորհրդի XXVI նստաշրջանում ընդունված որոշման շրջանակներում աշխարհագրական անվանումների տեղեկատվության փոխանակման գործընթացը: 2002 թվականից աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի հաշվառման աշխատանքներն իրականացվել են 1:25000 մասշտաբի թղթային քարտեզների վրա: Տարիների ընթացքում վերջիններս մաշվել են և դարձել են անօգտագործելի: Այդ պատճառով 2016 թվականից բոլոր քարտեզագրական նյութերը տեղափոխվում են էլեկտրոնային միջավայր, որպեսզի հետագայում թարմացման և վարման աշխատանքները իրականացվեն էլեկտրոնային քարտեզի վրա, որն անհամեմատ հարմար է օգտագործման և տրամադրման համար: 2018 թվականին նախապատրաստվող և հրատարակվող տեղեկատուների անհրաժեշտությունը բխում է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի և 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և կարևոր նշանակություն ունի լրատվական, գիտական, կրթական, քարտեզագրական և այլ ոլորտներում: Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ վերջին տարիների ընթացքում շատացել է հայալեզու հրատարակչական արտադրանքը, ստեղծվել են նոր հեռուստա- և ռադիոընկերություններ, գրահրատարակչություններ, թերթեր և ամսագրեր, որոնց կողմից ներկայացվող նյութերում տեղ են գտնում բազմաթիվ աշխարհագրական անվանումներ: Անճշտություններից և վրիպակներից խուսափելու նպատակով շատ կարևոր է ունենալ հավաստի և պաշտոնական տեղեկատու, որոնց միջոցով կներկայացվեն աշխարհագրական անվանումների ճիշտ գրելաձևերը:

ՀՀ մարզերի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուն՝ գազետիրը հրատարակվել էր 2007 թվականին, որից հետո ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանումները ավելացել են մոտ 4000-ով, այդ իսկ պատճառով 2016 թվականին գազետիրը թարմացվել և վերահրատարակվել է արդեն անգլերեն լեզվով:

Աշխատանքների իրականացման արդյունքում նախապատրաստված և հրատարակված տեղեկատուները նախատեսվում է ըստ անհրաժեշտության տրամադրել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև համապատասխան պետական կազմակերպություններին, կրթական և գիտական հիմնարկներին:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

2018 թվականի ընթացքում ոլորտի կարևորագույն միջոցառումներից է ՀՀ աշխարհագրական անվանումների քարտադարանի վարումը և թարմացումը, որը կրում է շարունակական բնույթ: Այն իր մեջ ներառում է աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի տվյալների անընդհատ թարմացում և լրացում: Այդ աշխատանքներն իրականացվում են էլեկտրոնային միջավայրում՝ 1:25000 տեղագրական բոլոր քարտեզների յոթ. կամ pdf. տարբերակների և հաշվառման ձևաթղթերի էլեկտրոնային /Excel/ ֆայլերի վրա:

2018 թվականի ընթացքում շարունակվելու է նաև մեծ պահանջարկ ունեցող տարաբնույթ տեղեկատուների ստեղծման և հրատարակման աշխատանքները, այդ թվում նախապատրաստվելու են հրատարակման Ասիայի և Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանները:

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

2018 թվականին նախատեսվող աշխատանքների արդյունքում ակնկալվում է ունենալ հետևյալ նյութերը՝

- թարմացված ՀՀ աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը,
- հաշվառված աշխարհագրական օբյեկտների անվանումներով նյութերը և էլեկտրոնային տեղագրական քարտեզները,
- Ասիայի և Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանները:

5. Աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույցը

2018 թվականին աշխարհագրական անվանումների բնագավառում նախատեսվող աշխատանքների ժամանակացույցն ըստ ծավալների, իրականացման ծախսերի և ժամկետների տրված է աղյուսակ 1-ում:

Ժամանակացույց

2018 թվականին աշխարհագրական անվանումների բնագավառում նախատեսվող աշխատանքների աղյուսակ 1

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	1	9 ամիս	Տարի
			կիսամյակ ծավալը	ծավալը	ծավալը
1	ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքների՝				
	ա/ թարմացում	ամիս	3	5	6
	բ/ քարտադարանի վարում	ամիս	3	6	9
2	Ասիայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան				
	ա/ նախապատրաստում	օբյեկտ	190	310	400
3	Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան				
	ա/ նախապատրաստում	օբյեկտ	130	230	300

Չափաբաժին 8- ԹԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում թեմատիկ քարտեզագրությունը դիտարկվում է որպես պետական նշանակության ոլորտ: Դա ամրագրված է նաև «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի է/ կետում: Պետական նշանակության թեմատիկ քարտեզագրության հրատարակումները հանդիսանում են որպես պաշտոնական նյութ, որոնց վրա կարելի է հղում կատարել և օգտագործել հավաստի տեղեկատվություն ստանալու համար:

Այդ աշխատանքների շարքին են պատկանում հիմնարար առկայությունները /Ազգային առկայություն, Աշխարհի Մեծ առկայություն/ ինչպես նաև կրթական համակարգի համար նախատեսված հավաստի նյութ պարունակող ուսումնական քարտեզներն ու առկայությունները:

2. Աշխատանքների իրականացման նպատակը

Բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում նախկինում հրատարակվել են Հայաստանի Ազգային առկայությունից Ա և Բ հատորները, ինչպես նաև 32 անվամբ ուսումնական քարտեզներ, որոնք անվճար տրամադրվել են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դպրոցներին: Նկատի ունենալով աշխարհի տարբեր երկրներում Հայաստանի Ազգային առկայությունից նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունն և այն հանգամանքը, որ Հայաստանի Ազգային առկայությունից ԱՊՀ երկրներից առաջիններից է ավարտուն տեսքով հրատարակվել, նախատեսվում է հրատարակել նաև Առկայությունից անգլերեն երկհատորյակը և ռուսերեն լեզվով մեկհատորյակը:

2014 թվականին ավարտվել են Հայաստանի Ազգային առկայությունից անգլերեն տարբերակի Ա հատորի ստեղծման աշխատանքները: Իսկ 2017 թվականին ավարտել են Հայաստանի Ազգային առկայությունից անգլերեն լեզվով Բ հատորի նախապատրաստման աշխատանքները: 2018 թվականին նախատեսվում է երկհատորյակը հանձնել հրատարակման:

2018 թվականին նախատեսվում է նախապատրաստել և հրատարակել 5 անվանմամբ ուսումնական քարտեզներ, որոնք նույնպես նախատեսված են կրթական համակարգի, ինչպես նաև պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների համար:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

2018 թվականին նախատեսվում է շարունակել Հայաստանի Ազգային առկայությունից ռուսերեն լեզվով տարբերակի նախապատրաստման աշխատանքները: Կիրականացվի ևս 80 էջ քարտեզների նյութի թարմացման և թարգմանության, խմբագրման և ձևավորման աշխատանքները: Մնացած մոտ 140 էջ քարտեզների, տեքստերի, աղյուսակների ստեղծման աշխատանքներն ավարտին կհասցվեն հաջորդ տարի: Ուսումնական և զբոսաշրջային թեմատիկայով 5 քարտեզների անվանումները կճշտվեն հետագայում ըստ այդ ժամանակի առաջնահերթության:

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

Աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ հետևյալը՝
ա/ Հայաստանի Ազգային առկայությունից ռուսերեն լեզվով թարգմանված, խմբագրված և ձևավորված ևս 80 էջ,

բ/ 5 ուսումնական և զբոսաշրջային քարտեզ:

5. Աշխատանքների իրականացման նախահաշիվը և ժամանակացույցը

Թեմատիկ քարտեզագրության բնագավառում 2018 թվականին նախատեսվող աշխատանքների ժամանակացույցն ըստ ծավալների, իրականացման ծախսերի և ժամկետների տրված է աղյուսակում:

Ժամանակացույց

Թեմատիկ քարտեզագրության բնագավառում 2018 թվականին նախատեսվող աշխատանքների

աղյուսակ					
Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	1 կիսամյակ	9 ամիս	Տարի
			ծավալը	ծավալը	ծավալը
1	Հայաստանի Ազգային առկայությունից անգլերեն տարբերակի Ա հատորով				
	ա/թարմացում և թարգմանություն	էջ	45	70	80
	բ/ էջերի միավորում և խմբագրում	էջ	45	70	80
	գ/ քարտեզների ձևավորում	էջ	45	70	80
2	Ուսումնական և տուրիստական քարտեզներ				
	ա/խմբագրում	քարտեզ	2	4	5
	գ/քարտեզների ձևավորում	քարտեզ	2	4	5

Չափաբաժին 9- ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

2011 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»: Դրանով իսկ ՀՀ կառավարությունը հաստատեց, որ վարչատարածքային բարեփոխումներն անհրաժեշտ են՝ համայնքների զարգացման շարունակականության ապահովման, համայնքի կողմից առավել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման, խոշորացված համայնքների միավորված ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, հողային և այլն) առավել արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Այնուհետ, համայնքների խոշորացման գործընթացի անհրաժեշտությունը կարևորվեց նաև այլ փաստաթղթերում, մասնավորապես, ՀՀ կառավարության տարեկան ծրագրերում, Կայուն զարգացման ծրագրում, ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում և այլն:

2017 թվականին ՀՀ համայնքների խոշորացման ծրագրի շրջանակներում կազմավորվել են ևս 34 խոշորացված համայնքներ, որոնց կազմը և սահմանների նկարագիրը ամրագրված է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում, սակայն այդ համայնքները չունեն միասնական կադաստրային և հողաշինարարական հատակագծեր, ինչպես նաև հողային հաշվեկշիռ:

Հողի սեփականաշնորհումից հետո հանրապետության բազմաթիվ համայնքներում՝ հատկապես լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ հողային պաշարներն օգտագործվում են ոչ լիարժեք. շատ համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողերի մի մասը ընդհանրապես չի օգտագործվում, որի հետևանքով տեղի է ունեցել հողատեսքերի փոփոխություն, սակայն համայնքների հատակագծերում և հողային հաշվեկշիռներում դրանք ճշտված չեն: Համայնքների հողային հաշվեկշիռները ճշտելու համար խիստ կարևոր է այդ հողերի վիճակի ուսումնասիրությունը:

2018 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ևս 30 խոշորացված համայնքների կադաստրային և հողաշինարարական հատակագծերի և դրանց հողային հաշվեկշիռների կազմման աշխատանքներ:

2. Ծրագրի իրականացման նպատակը

ՀՀ խոշորացված համայնքներին ապահովել կադաստրային և հողաշինարարական հատակագծերով, այդ համայնքներին տրամադրել ճշտված հողային հաշվեկշիռ:

3. Ծրագրի իրականացման միջոցառումները

ՀՀ խոշորացված համայնքները չունեն մեկ ընդհանուր մասշտաբի բերված կադաստրային և հողաշինարարական հատակագծեր, ճշտված հողային հաշվեկշիռ, հետևաբար անհրաժեշտ է.

1. Կազմել ՀՀ խոշորացված համայնքների 1:5 000 կամ 1:10 000 մասշտաբի կադաստրային և հողաշինարարական հատակագծերը:

2. Կազմել ՀՀ խոշորացված համայնքների հողային հաշվեկշիռները:

Աշխատանքները նախատեսվում է կատարել հետևյալ փուլերով

1. Նախապատրաստական աշխատանքներ

- հավաքագրել գոյություն ունեցող հողաշինարարական տարբեր մասշտաբների (1:2000, 1:5000, 1:10 000, 1:25 000) քարտեզագրական (հանութագրման) նյութերը.

- հավաքագրել վերջին տարիներին կատարած կադաստրային տեղագրական և օդալուսանկարչական հանութագրման նյութերը.

- վերհանել վերջին տարիներին ՀՀ օրենքները և կառավարության որոշումները՝

ա/ համայնքների վարչական սահմանների փոփոխությունների հաստատման մասին.

բ/ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերից համայնքներին հատկացված հողերի մասին.

- հավաքագրել տվյալներ չօգտագործվող և անարդյունավետ օգտագործվող հողերի վերաբերյալ:

2. Դաշտային աշխատանքներ

- տեղում ուսումնասիրել համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխությունները՝ հողային հաշվեկշիռներում համապատասխան ճշտումներ կատարելու նպատակով:

3. կամերալ աշխատանքներ

- օգտագործելով հավաքագրված նյութերը և դաշտային հետազոտությունների արդյունքները՝ տարբեր մասշտաբի կադաստրային և հողաշինարարական հատակագծերը համադրել և կազմել.

ա) համայնքի 1:5000 կամ 1:10000 մասշտաբի հողաշինարարական և կադաստրային հատակագծերը

բ) համայնքի հողային հաշվեկշիռը

3. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Ծրագրով նախատեսված աշխատանքների արդյունքում համայնքը կունենա հողաշինարարական և կադաստրային քարտեզ, ճշտված հողային հաշվեկշիռ, որոնք կօգտագործվեն հողային հարաբերությունների կարգավորման, համայնքների հեռանկարային սխեմաների և գլխավոր հատակագծերի կազմման համար:

Ժամանակացույց

2018 թվականին ՀՀ խոշորացված համայնքների հատակագծերի և հողային հաշվեկշիռների կազմման աշխատանքների

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	արյուսակ		
			I կիսամյակ ծավալը	9 ամիս ծավալը	Տարի ծավալը
1	Գոյություն ունեցող հողաշինարարական քարտեզագրական նյութերի հավաքագրում և ուսումնասիրում	համայնք	30	30	30
2	Համայնքներում հողատուքերի փոփոխությունների ուսումնասիրում, համայնքների կադաստրային և հողաշինարարական հատակագծերի, հողային հաշվեկշիռների կազմում, համաձայնեցում համայնքների ղեկավարների հետ	համայնք	11	22	30

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220042
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝



Կրթագրություն/

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կոմիտաս 35/2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 247120034787
ՀՎՀՀ 00113126
Գործադիր տնօրեն՝



Կրթագրություն/

Կրթություն

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

		Աշխատանքի										
հրավերով նախ. չ/բ/ համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									Ընդամենը
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	71351280/1	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ WGS-84 (ԿԻ ՁԻ ԷՍ-84) (ArmREF02) ԱՁԳԱՅԻՆ ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔՎԱԶԻԳԵՈՒԴԻ ՄՈՂԵԼԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	29958200	29958200	29958200	51878285	51878285	51878285	62981400	62981400	62981400	62981400
4	71351280/1	ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԹՎԱՅԻՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՂՆԵՐԸ ԵՏՀ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (Սպիտակ)	43180225	43180225	43180225	51167925	51167925	51167925	53495040	53495040	53495040	53495040
5	71351280/1	ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԹՎԱՅԻՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՂՆԵՐԸ ԵՏՀ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (Սևան)	43508263	43508263	43508263	55498033	55498033	55498033	60407032	60407032	60407032	60407032
7	71351280/1	ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ	4224000	4224000	4224000	7328000	7328000	7328000	9600000	9600000	9600000	9600000
8	71351280/1	ԹԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ	6850250	6850250	6850250	11011500	11011500	11011500	12756000	12756000	12756000	12756000

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

**ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՄՆԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____

և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանում	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանք	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____
-ի Պատվիրատուի _____ անունը
Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին _____ հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն